ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն/

Հայաստանի Սոցիալական Նեղրումների Հիմնադրամ

Ծրագրի անվանումը: Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ինստիտուցիոնալ գնահատման հետազոտության

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ SDC-05

Հայաստանի սոցիալական նեդրումների հիմնադրամ (ՀՄՆՀ) ստացել է դրամաշնորհ Շվեյցարիայի Զարգացման և Համագործակցության Գործակալությունից (ՇԶՀԳ) և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի ինստիտուցիոնալ գնահատման հետազոտության մշակման համար:

Առաջադրանքի նպատակը. Սույն առաջադրանքի նպատակն է ՀՄՆՀ-ի ինստիտուցիոնալ գնահատումը, որը ներառում է ՀՄՆՀ գոյություն ունեցող կառուցվածքի և կարողությունների հետազոտությունը և անհրաժեշտ փոփոխությունների առաջարկումը՝ ՀՄՆՀ նոր զարգացման ռազմավարությանը համապասխան:

Խորհրդատուն պետք է՝

1. Գնահատի ՀՄՆՀ ներկա կառուցվածքը, ինստիտոիցիոնալ առաձնահատկությունները և կարողությունները.

2. Վերլուծի ՀՄՆՀ զարգացման ռազմավարությունը և դրա իրականացման հետ կապված առանձնահատկությունները, ներառյալ գոյություն ունեցող ՀՄՆՀ-ի բացերը.

3. Ռազմավարության խնդիրներն իրագործելու նպատակով առաջարկի ՀՄՆՀ կառուցվածքային փոփոխություններ նոր աշխատանքային գործառույթների, ՀՄՆՀ գործունեության ուղղությունների, կառավարման, որոշումների կայացման և ՀՄՆՀ-ի հետ համագործակցության ոլորտներում:

4. Վերլուծի և առաջարկություններ ներկայացնի ՀՄՆՀ կարողությունների ուժեղացման ուղղությամբ, ներառյալ ինստիտուցիոնալ ուսուցանումն ու լրացուցիչ աշխատուժով համալրելը (ներառյալ ըստ անհրաժեշտության նոր պաշտոնների ցանկը և աշխատանքային պարտավորությունների նկարագրերը):

Առաջադրանքի տևողությունը 60 օր:

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Ընտրության չափանիշներն են.

Տնտեսագիտության, բնագիտության, տեխնիկական գիտությունների կամ կառավարման ոլորտում մասնագիտական որակավորում.

Ընդհանուր փորձառություն / Կատարված աշխատանքների ցանկ և համառոտ նկարագրություն.

Վերջին 10 տարվա ընթացքում ինստիտուցիոնալ և կազմակերպական ոլորտում հետազոտական և վերլուծական աշխատանքի փորձ:

Վերջին 10 տարվա ընթացքում կառույցների և ծրագրերի կառավարման փորձ կամ նշված ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցման փորձ.

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-իփոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011» («Խորհրդատուների Ուղեցույցներ» (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January,2011) բաժին V-ում սահմանված Անհատ խորհրդատուների ընտրության ընթացակարգերին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՄՆՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Ձեռքբերումների բաժին, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2014 թ. հոկտեմբերի 31-ը, ժամը 17:00-ը:

Հայասանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ

Ձեռքբերումների բաժին

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ asif@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42